Հաստատում եմ՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր

Սրբուհի Գևորգյան

ԿԱՐԾԻՔ

Խաչատուր Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարանի

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի

2025թ. օգոստոսի 27 h. 1 նիստի

ԺՈՈՒ ՇՈՒՀԱՆԻ

«Դիցաբանական վիշապի կերպարը Հին Չինաստանի և Հայաստանի արվեստում»

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»

մասնագիտությամբ

արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

վերաբերյալ

Նիստին մասնակցել են արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Գրիգորյանը, գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Մելիքյանը, արվեստագիտության թեկնածու Ա. Առաքելյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Իսկոյանը և ամբիոնի մյուս անդամները:

Ժոու Շուհանի ատենախոսությունը արվեստագիտական համալիր ուսումնասիրություն է՝ նվիրված հնագույն և կարևորագույն դիցաբանական խորհրդանիշներից մեկի համեմատական վերլուծությանը երկու մշակույթներում: Աշխատանքն ուսումնասիրում է վիշապի կերպարի ձևավորման, զարգացման և իմաստաբանության գործընթացները՝ հիմնված աղբյուրների լայն շրջանակի վրա, ներառյալ բանահյուսությունը, հնագիտական գտածոները և գրավոր աղբյուրները:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է՝ քննել վիշապի դիցաբանական կերպարի կայացումն ու զարգացումը Հայաստանի և Չինաստանի արվեստում՝ բացահայտելով ընդհանուր հորինվածքներն ու պատկերագրական զուգահեռները: Հեղինակը վերլուծում է, թե ինչպես է այս կերպարը, որը մարմնավորում է տարերքը, պտղաբերությունը, բարին և չարը, ներկայացված երկու երկրների արվեստում:

Հատուկ ուշադրության է արժանի հեղինակի համարձակ վարկածը՝ Հայաստանի վաղ բրոնզեդարյան Շենգավիթյան մշակույթի (մ.թ.ա. 29-25-րդ դարեր) սափորի նկարազարդումներում վիշապի կերպարի հնագույն շերտերը բացահայտելու մասին: Հեղինակը զուգահեռներ է անցկացնում այդ զարդանախշերի հորինվածքի և հին չինական վիշապի պատկերագրության միջև՝ համեմատելով դրանք հին չինական հիերոգլիֆների կառուցվածքի հետ:

Աշխատանքում նաև ներկայացված է, թե ինչպես են սոցիալական փոփոխություններն ազդել դիցաբանական կերպարների վրա: Օրինակ, Չինաստանում մայրիշխանական կարգից հայրիշխանականի անցումը (մ.թ.ա. մոտ 4000-2000 թթ.) հանգեցրել է վիշապի խորհրդանիշի վերափոխմանը:

Սահմանված նպատակներին հասնելու համար հեղինակը կիրառում է միջառարկայական մոտեցում՝ համատեղելով պատմա-համեմատական և գեղարվեստա-փորձարարական մեթոդները:

Ուսումնասիրությունը հիմնված է ոչ միայն արվեստագիտական վերլուծության, այլև օժանդակ գիտությունների՝ հնագիտության, ազգագրության, հոգեբանության, նշանագիտության և դիցաբանության տվյալների վրա: Տեսական հիմք են ծառայել արվեստագիտության դասականների մեթոդաբանական մշակումները, մասնավորապես՝ Էրմին Պանոֆսկու պատկերագրական մեթոդը և Չարլզ Սանդերս Պիրսի նշանագիտական տեսությունը: Սա թույլ է տալիս հեղինակին ավելի խորը հասկանալ բրոնզեդարյան բնակիչների սոցիալ-մշակութային ավանդույթներն ու պաշտամունքային պատկերացումները՝ առավելագույնս մոտենալու հնագույն պատկերների սկզբնական մտահղացմանը:

Աշխատանքը կազմված է նախաբանից, յոթ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավոր ներկայացրել է պահանջվող բոլոր դրույթները:

Առաջին գլուխը կրում է «Պատկերները նախապատմական շրջանում» խորագիրը: Այս գլուխը քննարկում է ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքերը: Հիմնական կարևորությունը տրվում է պատկերագրության և նշանագիտության մեթոդների կիրառմանը՝ հնագույն մշակույթն ուսումնասիրելու և նախապատմական պատկերները վերլուծելու համար:

Երկրորդ գլխում ուսումնասիրման առարկան է դիցաբանական վիշապի կերպարը և վերջինիս վերլուծությանը՝ հին Չինաստանի հավատալիքների և մշակույթի համատեքստում: Քննարկվում է մայրիշխանական հասարակական կարգից հայրիշխանականի անցումը, ինչպես նաև հավատալիքների զարգացումը՝ կենդանիների տոտեմների պաշտամունքից դեպի նախնիների պաշտամունք: Վերլուծվում է նաև վիշապի կերպարը հին չինական հուշարձաններում:

Հաջորդ գլխումներում ներկայացված են վիշապների հետ կապված Չինաստանի առասպելներն ու լեգենդները, դրանց կառուցվածքն ու գլխավոր հերոսները: Բացատրվում է, թե ինչպես են հին գրավոր աղբյուրները ժամանակի ընթացքում հարմարվել՝ ջնջելով առասպելի և պատմության միջև սահմանը: Դիտարկվում են նաև դիցաբանական վիշապների հետ կապված նախատիպերը:

Եզրակացություններում արտացոլված են համակողմանի վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումները:

Ընդհանուր օգտագործված գրականության ցանկը ներառում է շուրջ 221 աղբյուր: Հավելվածում զետեղված է 65 վերատպություն և 12 աղյուսակ, որոնք արտացոլում են աշխատանքում ուսումնասիրվող նյութը:

Այդ ամենի հետ մեկտեղ կցանկանայինք նշել մի քանի առաջարկներ.

- Կարելի էր կատարել ավելի լայն համեմատական վերլուծություն Առաջավոր Ասիայի մշակույթի հետ: Դա կօգնի հասկանալ և հստակեցնել, թե արդյոք շենգավիթյան մոտիվները եզակի են և զուգահեռներ ունեն հենց Չինաստանի հետ, թե դրանք տեղավորվում են ավելի լայն տարածաշրջանային համատեքստում:

- Կարծում ենք, որ հավելվածում զետեղված վերատպությունները պետք է լինեին ավելի մեծ չափերի, որպեսզի հստակ դիտարկվեն պատկերագրական առանձնահատկությունները:

- Ցանկալի է օգտագործված գրականության ցանկը կազմել ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան:

Նշվածները չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը:

Աշխատանքում պահպանված են գիտական ուսումնասիրության բոլոր անհրաժեշտ կանոնները:

Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որն իր արտացոլումն է գտել վեց գիտական հոդվածներում:

Աշխատանքը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ հեղինակ Ժոու Շուհանին արժանի է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության

ամբիոնի վարիչ,

արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սյուզաննա Գրիգորյան

Սյուզաննա Գրիգորյանի ստորագրությունը

հաստատում եմ

ՀՊՄՀ գիտ. քարտուղար Մարիամ Իսպիրյան

01.09.2025թ.